ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՀՀ ՈՌ ՀԲՄԱՊՁԲ-21/1/Բ/3/ՎՔՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան <<21>> 05 2021թ.
ժամը 16[00]

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ.
ՀՀ ՈՌ հրամանատարի մարտական պատրաստության գծով տեղակալ, գ-տ Գ. Միրզոյան (ԳՊ/ԳԱՊ)
Անդամներ.
ՀՀ ՈՌ իրավական ապահովման բաժանմունքի պետ, փ/գ-տ Ա. Տեր-Եսայան (ԳՊ/ԳԱ)
ՀՀ ՈՌ պարենային ծառայության պետ, փ/գ-տ Ա. Ավանեսյան (ԳՊ/ԳԱ)
ՀՀ ՈՌ ֆինանսական բաժնի ավագ սպա, մ-ր Հ. Մանուկյան (ԳՊ/ԲԱ)
ՀՀ ՈՌ մարտական պատրաստության բաժնի ավագ սպա, մ-ր Ա. Քարամյան (ԳՊ/ԲԱ)
Քարտուղար.
ՀՀ ՈՌ ԳՀ և ՓՁ բաժանմունքի սպա, լ-տ Լ. Աբրահամյան (ԳՊ/ՄՀմ)

1. **ՀՀ ՈՌ ՀԲՄԱՊՁԲ-21/1/Բ/3/ՎՔՆ** ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին.
1.1 Ընթացակարգին մասնակցելու հրավերը ուղարկվել է էլեկտրոնային գնումների կայքում՝ **armeps.am** և օրենքով սահմանված կարգով հրավերը հրապարակվել է **gnumner.am** էլեկտրոնային կայքում:
1.2 Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են էլեկտրոնային եղանակով:
1.3 Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Էլ. փոստի հասցե, հեռ.**
1	**<<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ**	էլ. հասցեն՝ tendercps@gmail.com
2	**<<Մաքս Օիլ>> ՍՊԸ**	էլ. հասցեն՝ maxoil.iic@mail.ru
3	**<<ՖԼԵԾ>> ՍՊԸ**	էլ. հասցեն՝ flashltdtender@gmail.com

1.4 Տվյալներ՝ հայտերի ծրարների կազմման, ներկայացման, հրավերի պահանջներին համապատասխանության և պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.
1.4.1 **N ՀՀ ՈՌ ՀԲՄԱՊՁԲ-21/1/Բ/3/ՎՔՆ** ծածկագրով հրատապ բաց մրցույթին՝ էլեկտրոնային ձևով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով բոլոր մասնակիցները ներկայացրել են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
1.5 Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.
1.5.1 **N ՀՀ ՈՌ ՀԲՄԱՊՁԲ-21/1/Բ/3/ՎՔՆ** ծածկագրով հրատապ բաց մրցույթին՝ էլեկտրոնային ձևով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցները ներկայացրել են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:
1.6 Տվյալներ մերժված առաջարկությունների մասին.
1.6.1 Մերժված հայտեր չկան:
1.7 Ընթացակարգի հրավերի վերաբերյալ ներկայացված հիմնավորումների մասին.
1.7.1 Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:
1.8 Մասնակիցների առաջարկած գները՝ **տես աղյուսակ 1-ում:**
1.9 Տեղեկություններ հրատապ բաց մրցույթի արդյունքների մասին.
Գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1.9.1 Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 40-րդ մասի 5-րդ կետի՝ **ՀՀ ՈՌ ՀԲՄԱՊՁԲ-21/1/Բ/3/ՎՔՆ** ծածկագրով ընթացակարգի 21.05.2021թ-ի, ժամը 15:00-ին ոչ գնային պայմանները

բավարարող գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման նպատակով վարված միաժամանակյա բանակցությունների արդյունքում «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով նվազեցրել է գինը՝ միավորի համար առաջարկելով 390 դրամ նախկին 405 դրամի փոխարեն (Տես՝ աղյուսակ 1):

1.9.2 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021թ մարտի 25-ի N 414-Ն որոշումով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգում 25.03.2021թ-ին կատարված փոփոխությունը (40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերություն) և հրավերի 2-րդ մասի 2-րդ կետով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված լինելու հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին և տեղեկագրում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումից և օրենքով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս հետ կնքել պայմանագիր:

1.10 Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝	գ-տ	Գ. Միրզոյան (ԳՊ/ԳԱՊ)
Անդամներ՝		
	փ/գ-տ	Ա. Տեր-Եսայան (ԳՊ/ԳԱ)
	փ/գ-տ	Ա. Ավանեսյան (ԳՊ/ԳԱ)
	մ-ր	Հ. Մանուկյան (ԳՊ/ԲԱ)
	մ-ր	Ա. Քարամյան (ԳՊ/ԲԱ)
Քարտուղար՝	լ-տ	Լ. Աբրահամյան (ԳՊ/ՄՀմ)

աղյուսակ 1

Հ/հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	քանակը	միավ. գին	նախահաշվային գումար	<<Մաքս Օիլ>> ՍՊԸ				<<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ				<<ՖԼԵՇ>> ՍՊԸ			
					առանց ԱԱՀ	ԱԱՀ	միավ. գին	գումար	առանց ԱԱՀ	ԱԱՀ	միավ. գին	գումար	առանց ԱԱՀ	ԱԱՀ	միավ. գին	գումար
1	Բենզին «ռեգուլյար» կտրոնով	80000	368,2	29456000	27533333,3	5506666,7	413	33040000	26000000	5200000	390	31200000	27333333,3	5466666,7	410	32800000